# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ-Ն ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/157 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | "Նստարաններ. Նստարան՝ Մետաղական հիմնակմախքով և փայտյա նստատեղերով։ Նստարանը պետք է պատրաստված լինի առնվազն 2000x900մմ չափսերի։Մետաղական հիմնակմախքը պետք է պատրաստված լինի քառակուսի կտրվածքով խողովակից /40x40x3մմ/ նստարանի 2 կողմասերում՝ եռակցումով /եռակցվող մասերը հղկել հղկաքարով/։ Մետաղական կողմասերի բարձրություն՝ առնվազն 630մմ։Մետաղյա կողմասերի ոտքերի ստորին մասում եռակցված առնվազն 3մմ հաստությամբ առնվազն 70x70մմ չափսերի 4 մետաղական թիթեղներ՝ յուրաքանչյուրի վրա 4 անցքեր, հարթակին /հատակին/ ամրացնելու համար։ Նստարանի անմիջապես նստատեղի տակ /փայտյա մասերի տակ, առջևում և ետնամասում/ 2 մետաղական կողմասերին եռակցված 2 հատ առնվազն 30x30x1.5 մմ չափսերի քառակուսի կտրվածքով խողովակ։ Մետաղական 2 կողմասերին՝ նստատեղի փայտերի ամրացման համար եռակցված պողպատյա անկյունակներ՝ առնվազն 40x40x4մմ չափերի առնվազն 460մմ երկարության, իսկ հենակի փայտերի ամրացման համար՝ պողպատե անկյունակներ առնվազն 40x40x4մմ չափերի առնվազն 300մմ երկարության։Նստարանի մեջտեղում՝ նստատեղի փայտյա մասերի տակ և հենակի փայտյա մասերի տակ, տեղադրված առնվազն 30x20x1.5մմ հաստությամբ ուղղանկյուն կտրվածքով մետաղական խողովակ՝ եռակցված հիմնակմախքին, իսկ փայտյա մասերին՝ հեղյուս և մանեկով /բոլտ ու գայկա/ ամրացված։ Նստարանի հենակին /4հատ/ և նստատեղին /6հատ/ 2 մետաղական կողմասերին հեղյուսով և մանեկով ամրացված առնվազն 1900x60x40մմ չափսերի չորացրած հաճարի հղկված փայտյա մասեր՝ նստատեղի մասերում եզրերը կլորացված։ Մետաղական մասերը՝ երկշերտ ներկված /գույնը ընտրել պատվիրատուի պատվերով/։ Փայտյա մասերը |

| | |
|---|---|
| | լաքապատված հաճարի գույնը մգեցնող լաքով:Թիկնակի վերին փայտյա մասի վրա, լազերային փորգրությամբ, փորագրված լինի §Մալաթիա-Սեբաստիա¦: Նստարանների տեղադրումը իրականացնել պատվիրատուի ներկայացված հասցեներով, մատակարարի միջոցներով: Նստարանի մետաղական հիմնակմախքի պատրաստումը /կորոցումները/ իրականացնել պատվիրատուի կողմից ներկայացված լուսանկարին համապատասխան: Նշված աշխատանքները պետք է իրականացվեն պատվիրատուի կողմից տրվող պատվեր առաջադրանքի հիման վրա: * Նստարանների պատրաստումը իրակականացնել շինարարական նորմերին, կանոններին և տեխնիկական պայմաններին համապատասխան |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ՏԱՊԱՍ ԸՆԴ ԿՈ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-23/157 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |